

«Վավերացնում»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
25 հոկտեմբերի 2000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հոկտեմբերի 2000 թվականի N 679
քաղ. Երևան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼ ՄԱՍԻՆ

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. Հաստատել բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը (կցվում է)։
2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության 2002-2005 թվականների պետական բյուջեների նախագծերը կազմելիս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կողմից ներկայացված հայտերի հիման վրա քննարկել բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու հնարավորության հարցը։
3. Գաղտնի։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000 թվականի հոկտեմբերի 25-ից։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

Հաստատված է

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

I. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Անհատական պաշտպանության միջոցներով ապահովվում են՝

ա) փրկարար ուժերի անձնակազմը՝ գտող հակազգազերով, շնչադիմակներով,

մաշկի պաշտպանության միջոցներով, իսկ քիմիական վտանգավոր օբյեկտներում վթարի վերացման աշխատանքներին մասնակցող փրկարար ուժերի անձնակազմը նաև լրացուցիչ մեկուսացնող և արդյունաբերական հակազգազերով.

բ) սահմանամերձ՝ մինչև 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը՝ գտող հակազգազերով և համագորային պաշտպանական լրակազմերով.

գ) կազմակերպությունների աշխատողները, Հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը՝ գտող հակազգազերով և շնչադիմակներով.

դ) քիմիական վտանգավոր օբյեկտների անձնակազմը՝ մեկուսացնող և արդյունաբերական հակազգազերով.

ե) Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան ու Հրազդան քաղաքների բնակչությունը և այդ քաղաքների կազմակերպությունների աշխատողները՝ գտող հակազգազերով.

զ) մնացած բնակավայրերի բնակչությունը՝ գտող հակազգազերով:

II. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Բնակչությունն անհատական պաշտպանության միջոցներով ապահովվում է հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին հերթին՝

սահմանամերձ՝ մինչև 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը,

փրկարար ուժերի անձնակազմը,

Հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը և կազմակերպությունների աշխատողները.

քիմիական վտանգավոր օբյեկտների անձնակազմը.

բ) երկրորդ հերթին՝

Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների կազմակերպությունների աշխատողները.

Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների բնակչությունը.

գ) երրորդ հերթին՝

մնացած բնակավայրերի բնակչությունը:

III. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ

3. Բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները կուտակվում են նախապես զորահավաքային պահուստում դրանց պահեստավորմամբ և կազմակերպություններում համապատասխան պաշարների ստեղծմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին:

4. Կազմակերպությունների աշխատողների և կազմակերպությունների փրկարար ուժերի անձնակազմի համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները կուտակվում են կազմակերպություններում:

5. Բնակչության և կազմակերպությունների աշխատողների ու փրկարար ուժերի անձնակազմի համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները կուտակվում են Հայաստանի Հանրապետության պետական պահուստի նյութական արժեքների կուտակման համար սահմանված կարգով:

IV. ՇՆՉԱՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՇԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ

6. Անհատական պաշտպանության միջոցների բացակայության դեպքում, որպես մաշկի պաշտպանության հասարակ միջոցներ, կարող են հարմարեցվել սովորական հագուստը, մարզահագուստները (սպորտային կոստյումները) և կոշիկները, որոնք ենթարկվում են հերմետիկացման: Ցանկացած մարզահագուստ, ռետինե կոշիկներ և ձեռնոցներ կարող են դառնալ պաշտպանական գոտի լրակազմի միջոցների շարքի մասը: Այդ նպատակով կիրառվում են զանազան լվացող միջոցների լուծույթներ և օձառայուղային էմուլսիաներ: Մաշկի պաշտպանության հասարակ միջոցներն օգտագործվում են հակազգագերի հետ զուգորդված՝ ճառագայթային փոշիներից և մանրէաբանական միջոցների իսկ քիմիական լուծույթներով հագեցնելուց հետո նաև մարտական թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը բնակչությանն ուսուցանում է սեփական ուժերով շնչառական օրգանների պաշտպանության հասարակ միջոցների պատրաստման ու մաշկի պաշտպանության համար հագուստի հարմարեցման և դրանցից օգտվելու հնարքները:

(6-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)

V. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

7. Չափահաս բնակչության և երեխաների համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները պահպանվում են զորահավաքային պահուստի պահեստներում:

Կազմակերպությունների աշխատողների անհատական պաշտպանության միջոցների պաշարները պահպանվում են տվյալ կազմակերպությունների պահեստներում, ինչպես նաև դրանց համար նախատեսված պահարաններում:

8. Անհատական պաշտպանության միջոցների պահպանման պայմանները պետք է բավարարեն տվյալ օբյեկտում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կողմից սահմանված քաղաքացիական պաշտպանության գույքի երկարատև պահպանման պահանջները:

Պահեստների շենքերի պայմանների անբավարարության և քաղաքացիական պաշտպանության գույքի երկարատև պահպանման պահանջների անհամապատասխանության դեպքում թույլատրվում է անհատական պաշտպանության միջոցները պահել ապաստարաններում ու այլ շինություններում:

(8-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)

VI. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՊԱՀՈՒՄՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄԸ

9. Զորահավաքային պահուստի՝ որակական հատկանիշները կորցրած անհատական պաշտպանության միջոցները, որոնք լաբորատոր հետազոտման են ենթարկվում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար

ծառայության ճառագայթային և քիմիական լաբորատորիայում (համապատասխան եզրակացությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը), ենթակա են զորահավաքային պահուստից ապամարագրման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացմամբ՝ Հայաստանի փրկարար ծառայության և պետական ռեզերվների գործակալության եզրակացության հիման վրա:

Կազմակերպությունների՝ պաշտպանական հատկանիշները կորցրած անհատական պաշտպանության միջոցները (լաբորատոր հետազոտումն իրականացնում և համապատասխան եզրակացությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը) հանձնվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությանը, որոնց փոխարեն տրվում են նորերը:

(9-րդ կետը փոփ. 03.05.07 N 573- Ն, 21.08.08 N 1042- Ն)

10. Չորահավաքային պահուստի ապամարագրված անհատական պաշտպանության միջոցները կարող են օգտագործվել բնակչության և կազմակերպությունների փրկարար ուժերի ուսուցման համար:

VII. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

11. Չորահավաքային պահուստից անհատական պաշտպանության միջոցները բնակչությանը բաշխվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ կազմակերպություններում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի որոշմամբ:

Չորահավաքային պահուստի և կազմակերպությունների անհատական պաշտպանության միջոցների տեղաբաշխումն ու պահպանումն իրականացվում է՝ հաշվի առնելով կարճ ժամանակահատվածում դրանց բաշխման անհրաժեշտությունը:

12. Վտանգի առկայության դեպքում կազմակերպությունների փրկարար ուժերի անձնակազմերին, Հայկական ԱԷԿ-ի և քիմիական վտանգավոր օբյեկտների աշխատողներին, ինչպես նաև այն քաղաքների բնակչությանը, որտեղ տեղակայված են այդ օբյեկտները, և Հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությանն անհատական պաշտպանության միջոցները բաշխվում են նախօրոք:

13. Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում անհատական պաշտպանության միջոցների բաշխման կարգը սահմանվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության պլաններով:

14. Նշված պլաններով որոշվում են անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերը, ժամանակ քանակը և հերթականությունն ըստ համայնքների ու կազմակերպությունների:

Այդ պլաններում նշվում են նաև պահեստներից անհատական պաշտպանության միջոցների ստացման, բաշխման կետեր հասցնելու, դրանց ստուգման և հարմարեցման, բեռնման-բեռնաթափման խմբերը, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ հատկացնող կազմակերպությունները և պատասխանատու անձինք: